ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԷՏԵՐԸ.

Ռուս բիւրոկրատիան 80 տարուց աւելի ժողովրդին կերակրել է փշրանքներով կամ իրար հակասող սակաւակեաց օրէնքներով, որոնք ջնջուել են զանազան նախարարների և գեներալ նահանգապետների շրջաբերականներով և միշտ թերի թողել ժողովրդի պահանջն ու նրա յոյսերը բոլորովին անկատար։ Բնականաբար այդպէս չը պէտք է վերաբերուէր Ռուսաստանի առաջին պարլամէնտը և նրա բժշկութեան միջոցները պիտի լինէին հիմնական և փրկարար։ Եւ նա իրօք դեղատոմսեր է գրում, փրկարար դեղատոմսեր լայնածաւալ երկրի բժշկութեան համար, թէև դեռ դեղատան դռները պինդ փակած, դեղագործները կանգնել են առաջ և օղի և ուրիշ թմրեցուցիչ միջոցներ են առաջարկում հիւանդին ոչ թէ բժշկելու, այլ անզգայացնելու դիտաւորութեամբ։ Բայց դեղատոմսերը գրում են, հիւանդի հանրածանօթ դրութիւնը աւելի և աւելի պայծառ գոյներով դրում է հիւանդատիրոջ առաջ և թէ հիւանդներն ու հիւանդատէրերը ինչպէս կը պահանջեն և կըստանան դեղագործներից այդ դեղերը, կարծեմ գուշակել դժուար չէ։ Կիսահամբերատարութեան երկրում, որտեղ յանուն դաւանանքի քիչ չարիք չի գործուել ու արցունք թափուել, որտեղ հաղարաւոր մարդիկ իրենց խղճի հետ կոմպրոմիսի են մտել հաց կամ պաշտօն ստանալու, այժմ եկել է հիւանդի իսկական բժիշկը և խղճի ազատութեան համար գրել է հետևեալ դեղատոմս օրինագիծը։

1. Ռուսական կայսրութեան իւրաքանչիւր քաղաքացուն ապահովուում է խղճի կատարեալ ազատութիւն։ Այդ պատճառով էլ քաղաքական և քաղաքացիական իրաւունքներից օգտուելը կախուած չունի դաւանութիւնից և ոչ ոք չի կարող հալածանքի կամ իրաւանց սահմանափա-

կումների ենթարկուել իւր դաւանած կրօնական համոզմունքի պատճառով։ Այն բոլոր օրէնքները, որոնք սահմանափակում էին այս կամ այն դաւանութեան պատկանող անձանց իրաւունքները, վերացուում են։

2. Ռուսաստանում բոլոր գոյութիւն ունեցող և ծնունդ առնող դաւանութիւնները, բացի նրանցից որոնք բարոյականութեան հակառակ նպատակներ ունեն, օգտուում են աստուածպաշտութեան, կրօնական ծիսակատարութեան համահաւասար ազատութեամբ և իրենց դաւանութիւնը քարոզելու ու տարածելու իրաւունքով։

3. Ոչ ոքի չի կարելի հարկադրել իշխանութեան ուժով, որ նա կատարի այն պարտականութիւնները, որոնք ծագում են նրա այս կամ այն դաւանութեան պատկանելուց, կատարելու այս կամ այն կրօնական գործողութիւններ կամ մասնակցելու որ և է դաւանութեան ծէսերին։

4. Իւր կրօնական համոզմունքների պատճառով ոչ ոք չի կարող մերժել իւր այս կամ այն քաղաքացիական կամ քաղաքական պարտականութիւնների կատարումը բացի օրէնքով ճիշտ որոշուած դէպքերից։

5. 17 տարեկան դարձած իւրաքանչիւր անձնաւորութիւն ազատօրէն կարող է թողնել այն դաւանութիւնը, որին ինքը պատկանում է. այդ տարիքին չը հասած անչափահասը կրթուում է այն դաւանութեամբ, որը կը ցանկան նրա ծնողները։

Ծանօթութիւն. Այն դէպքում, երբ ծնողները պատկանում են զանազան դաւանութեանց, նրանց համաձայնութիւնից է կախուած իրենց զաւակների կրթութեան համար դաւանութեան ընտրութիւնը։ Եթէ այդպիսի համաձայնութիւն չի կայանալ, այդ դէպքում տղաները կրթուում են հօր, իսկ աղջիկները մօր դաւանութեամբ։

6. Կայսրութեան մէջ գոյութիւն ունեցող դաւանութեանց իրաւունքներն ու արտօնութիւնները որոշուում են առանձին օրէնքներով։

7. Քաղաքացիական ծագման ակտեր վարելու ձևը որոշվում է առանձին օրէնքով։

8. Պետական և համայնական դպրոցներում կրօնի դասաւանդութիւնը որոշվում է առանձին օրէնքով։

Սոյն օրէնքներին անհամապատասխան բոլոր կարգադրութիւնները վերացվում են։

Սոյն օրինագծին կցած բացատրական գրութիւնից առաջ ենք բերում հետեւեալ հատուածը.

Մեզանում քրիստոնէական մի օտար դաւանութիւնից միւս օտար դաւանութիւնն անցնելը կարելի էր մի միայն ներքին դրծոց նախարի թոյլտուութեամբ։

Չը կար ոչ մի օտար դաւանութիւն, որ չենթարկուէր վարչական սահմանափակումների, իսկ նրանցից մի քանիսի դէմ ուղղակի հալածանք էր յարուցվում։ Օրինագծի վերջում ասուած է.

Սոյն խնդրի իրագործումը ռուսական ժողովրդական ներկայացուցիչների առաջին պարտականութիւնն է։ Այդպիսի աղատութիւնը բարոյապէս կը վերածնի Ռուսաստանը, կամրացնի և կը վերածնի կրօնական զգացմունքը և առաջ կը բերի փոխադարձ համերաշխութիւն և խաղաղութիւն։

Մեզ մնում է միայն յաջողութիւն մաղթել Ռուսաստանի անդրանիկ երեսփոխանական ժողովին և իրագործած տեսնել նրա սրտագին փափագը, շուտով վերածնուած և խաղաղուած տեսնելու հայրենիքը և դադարեցրած մարդկային արեան գետերի հոսանքն ու զէնքի կոյր թագաւորութիւնը։